

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

ԱՐՏԵՄ ՍԱՐԳՍՅԱՆ

ՆԿԱԿԱ թղթակից անդամ

ԱՎԵՏԻՔ ԻԱՄԱՆԱԿՅԱՆԻ ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿՆԵՐԻՑ

Ստորև հրապարակվող երեք մամակները մոր լույս են ափոռում Ավետիք Իսահակյանի՝ Գերմանիայում և Եվեցարիայում Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ապրած շրջանի, նրա աշխարհընկալումների, բացառիկ պարտաճանաչության, խնամակալ հոգատարության մասին: Երեք մամակներն էլ մույն հասցեատերին են ուղղված՝ Էջմիածնի սինդիկատի դատախազ պարոն Փարսադան Մելիք-Օհանջանյանին: Փ. Մելիք-Օհանջանյանը հորեղբայրն էր հայագիտության մեծ երախտավոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Կարո Մելիք-Օհանջանյանի: Փարսադան Մելիք-Օհանջանյանը իրավագիտության թեկնածու էր: 1880 թվականին Օդեսայում մա տպագրել էր իր գիտական աշխատանքներից մեկը՝ «Разграничение подсудимости коммерческих судов от подсудности судебных учреждений, общих и мировых» արժեքավոր մենագրությունը: Ինչպես երևում է Ավ. Իսահակյանի գրած մամակներից, Փ. Մելիք-Օհանջանյանը հոգացել է Կ. Մելիք-Օհանջանյանի Գերմանիայում ուսանելու ընթացքում անհրաժեշտ եղած բոլոր ծախսերը: Բեռլինում ուսանելու տարիներին ապագա մեծանուն հայագետը ապրել է Վարպետի տանը: Ավ. Իսահակյանը 1915 թ. հունվարի 25-ին Ժնևից գրած մամակում հատուկ շեշտել է. «... Ձեր եղբոր որդին՝ Կարապետը, իմ մոտ է ապրում...»: Այնուհետև Ավ. Իսահակյանը պարտք է համարում մի քանի տեղեկություն տալ նրա մասին: «Հոկտեմբերից,- գրում է Վարպետը,- Կարապետը Մարբուրգից տեղափոխվեց Բեռլին, որ այնտեղից էլ Ռուսաստան ուղևորվեք...»:

Արդեն հինգերորդ ամիսն էր, ինչ սկսվել էր Առաջին համաշխարհային պատերազմը և, բնականաբար գերմանական կողմը արգելքներ էր հարուցել՝ Կարապետ Մելիք-Օհանջանյանի վերադարձը դարձնելով անհնար: Պատճառը հստակ էր. «Գերման կառավարությունը թույլտվություն չտվեց, իբրև զինվորական հասակի մեջ գտնվողի, և միջազգային օրենքի հիման վրա մա ստիպված է մնալ Գերմանիայում մինչև պատերազմի վերջը»: Այնուհետև Ավ. Իսահակյանը շտապում է հանգստացնել Կ. Մելիք-Օհանջանյանի հորեղբորը. «... միայն այսքան.- ուրիշ ո՛չ մի նեղություն, ո՛չ մի ճնշում. ազատ է ուստիկանական հսկողությունից. ամբողջ Բեռլինում ուր ուզում է՝ կարող է գնալ, միայն Բեռլինը թողնել իրավունք չունի»:

Տարիներ շարունակ ցարական охранка-յի գաղտնի ծառայությունների հսկողությունը «վայելած» Վարպետը պարզաբանում է ստեղծված կացությունը: Հակիրճ, ընդամենը մեկ նախադասությամբ Վարպետը սպառնալից տեղեկություններ է տալիս Կարապետի թե՛ առողջության, թե՛ զբաղմունքի և թե՛ տրամադրության մասին, ընդ որում առանց գումարադրելու, հավաստի բնութագրումներով. «Տրամադրությունը վատ չէ, առողջ է չափա-

զանց, լավ պարապում է»: Շնորհիվ Փարսադան Մելիք-Օհանջանյանի հոգացողության «մինչև օրս,- գրել է Ավ. Իսահակյանը.- չի նեղվել, թող որ Ցյուրիխի մի պրոֆեսոր (կարծես Zeller) Ս. Մեսրոպ եպիսկոպոսի միջնորդությամբ պատրաստակամություն է հայտնել դրամ հասցնելու»:

Ավ. Իսահակյանը բավական պատկերավոր է ներկայացնում Կարապետի կենցաղային պայմանները, ապրած միջավայրն ու շրջապատը. «Ես,- գրել է Վարպետը,- մի ամբողջ բնակարան ունեմ, և Կարապետը ուրիշ մի տղայի հետ ապրում են ինձ մոտ, մի հարկի տակ, միասին եփում ենք, միասին ուտում»: Անշուշտ իդիլիկ պատկեր չի ստեղծում մամակագիրը, մա շեշտում է մասնաճյուղային մտահոգությունները, որ տանջում են Կարապետին. «Միայն ձեզնից մամակ չստանալը մեծ հոգս է պատճառում մրան, այնպես որ **խնդրում եմ բարի լիներ հաճախ գրելու Ձեր առողջության մասին և ընտանիքի՝ նույնպես**» (ընդգծումը մերն է.- Ա. Ս.): Ինչպիսի՜ հոգատարություն, մութ «հիշեցում», ազնիվ տակտ: Պատերազմական իրավիճակում երկու թշնամի երկրների միջև առաջացած դժվարին պայմաններում Ավ. Իսահակյանը հորդորում է օգտվել Գանիայի մայրաքաղաք Կոպենհագենի «Կարմիր խաչի» հասցեից: Ինչպես պարզվում է շուրջ 10 ամիս անց գրած հաջորդ մամակից (21 նոյեմբեր 1915), Կարապետը նշված հասցեով փող ստանում էր Զելիկի միջոցով Ցյուրիխից, բայց Հայաստանի իր հարազատներից վաղուց է, ինչ տեղեկություն չունենք: Նշելով այս մասին՝ Ավ. Իսահակյանը ընդգծում է պատերազմի պատճառով ստեղծված ծանր նյութական կացությունը. «... ապրուստը սաստիկ թանկացել է Բեռլինում...»: Այդ ծանր պայմաններում Կարապետ Մելիք-Օհանջանյանը «Համալսարանում դասեր է լսում. ժամանակը զուր չի վատնում...»: Այնուհետև, մամակագիրը վերստին նկարագրում է Առաջին աշխարհամարտի պատճառած ավերներն ու կորուստները. «... ամեն տեղ սուգ ու լաց է ...»:

Երրորդ մամակում Ավ. Իսահակյանն ավելի հանգամանորեն է անդրադառնում համաշխարհային պատերազմի պատճառով ստեղծված անտանելի կացությանը. «Հիմա Գերմանիայում դրությունը օրեցօր վատանում է, թա՛նկ, թա՛նկ, թա՛նկ. ապրել անկարելի է դառնում ... Այստեղ Զվիցերիայում էլ դժոխք է դարձել. նզովված Գերմանիան աշխարհ քանդեց, և դեռ քանդում է, տեսնենք երբ է հերթը իրեն գալու, սպասենք և հուսանք...»: Ավ. Իսահակյանը, պատկերելով իրավիճակը, միաժամանակ շեշտում է, որ շնորհիվ Փարսադան Մելիք-Օհանջանյանի նյութական օժանդակության հնարավոր է լինում մեղմել կացությունը. «Ձեր հայրական խնամքով է, որ մա պիտի կարողանա այդ դժվարություններից զուլխ հանել...»:

Այդպես էլ լինում է: Հետագայում Կարապետ Մելիք-Օհանջանյանը պիտի վերադառնա Հայրենիք, տպագրության պատրաստի «Սասունցի Գավիթ» ազգային էպոսի լավագույն պատումները, թարգմանի դրանք ոուսերեն, անցնի բռնադատվածի դաժան, բայց սուրբի ճանապարհով: Տասնամյակներ շարունակ մա իր հիշողության մեջ ջերմորեն փափաջել է Բեռլինում՝ Ավ. Իսահակյանի հարկի ներքո ապրած տարիներից ստացած տպավորությունները:

Ավ. Իսահակյանը իրական մեծություններին հատուկ մարդկային ջերմությամբ և հոգատարությամբ արտագրել է Բեռլինից իր միջոցով Կովկաս, հարազատներին գրած Կա-

րապետի մամակները, գնահատել է Փարսադան հորեղբոր գուրգուրալից խնամքն ու նյութական զոհողությունները: Խորհրդանշական է Ավ. Իսահակյանի գրած երրորդ մամակի օրը. 8 նոյեմբերի 1917 թվական – հոկտեմբերյան հեղաշրջման ճիշտ հաջորդ օրը:

Երկու տարի անց Կարապետ Մելիք Օհանջանյանը պիտի վերադառնա Հայաստան, անցնի իրեն վերապահված «տառապանքի ուղիներով», տպագրի հայագիտական իր մեծարժեք գործերը: Հետո վերջնականապես Հայաստան պիտի վերադառնա Վարպետը՝ գրական, մշակութային սերունդներ պատրաստելու սրբազան առաքելությամբ: Ծնորհիվ ներկայացվող այս ընդամենը երեք մամակի ակնհայտ է դառնում, որ հեռավոր Գերմանիայում Ավ. Իսահակյանը հսկայական ջանքեր է թափել Եվրոպական մակարդակի գիտական սերունդ պատրաստելու գործին ի նպաստ: Ըշմարիտ մեծությունը զգացնել է տալիս անգամ մի փոքրիկ մամակով: Ստորև տպագրվող մամակները սրբազան մասունքներ են Վարպետի՝ Եվրոպայի սրտում ապրած, պատերազմի թոհուրթոհում իր հայրենիքի ճակատագրով տառապող մեծ Մարդու մտահոգությունների, քաղաքացիական կեցվածքի, հայրական խնամքի ու հոգացողության պատրաստ հայրենակցի ներաշխարհի բացահայտման առումով: Նամակագիրը՝ Ավ. Իսահակյանը, և մամակներում բնութագրվող անձը՝ Կարապետ Մելիք-Օհանջանյանը, հայտնի են ընթերցող լայն հասարակայնությանը, հասցեատերը՝ Փարսադան Մելիք-Օհանջանյանը, շնորհիվ այս մամակների ներկայացվում է իր գնահատելի կեցվածքով, անասկարկ նյութական օժանդակությամբ, որ հետագայում վերածվում է բարոյական և ազգային վավերական արժեքի: Այս մամակների հաջորդականության մեջ ի հայտ է գալիս նաև Վարպետի՝ աստիճանաբար ձևավորված մոտեցումը, գնահատականը: Եթե առաջին մամակը ավարտվում է սոսկ «մնամ **իսկական** հարգանքներով և բարևներով Ձերդ՝ Ավ. Իսահակյան» տողերով, ապա երկրորդ մամակը արդեն ունի «**չեքոմ** հարգանքներով մնամ՝ Ավ. Իսահակյան» ավարտը, իսկ վերջապես երրորդ մամակը Վարպետն ավարտում է «**Ձերդ անկեղծ**՝ Ավետիք Իսահակյան»: Աստիճանաբար ձևավորվում է մի վերաբերմունք, որ նախ բնութագրվում էր իսկական **հարգանքով**, ապա այն դառնում է **չեքոմ** և վերջապես բնութագրվում **անկեղծ** հատկանիշով: Վարպետը երբեք խոսքաշռայլումներ չէր սիրում: Ահավասիկ ընդամենը երեք մամակ. մամակներ, որոնք «արտացոլում» են Առաջին աշխարհամարտի թոհուրթոհում Ավ. Իսահակյանի դատումներն ու բնութագրումները՝ հընթացս ներկայացնելով հայտնի ու անհայտ դեմքեր ու դեպքեր: Ներկայացվող մամակները կարելի է դասել մակագրական ժանրի տիպական մոուզների շարքին: Մեծ մարդիկ ի հայտ են գալիս նաև «փոքր գործերում»՝ առերևույթ սովորական համարվող մամակներում: Եվ որ դա այդպես է, կարող են վկայել և սույն մամակները:

ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԸ

25/1 1915 թ.

Ժընև.

Մեծապատիւ Պ. Փ. Մելիք-Օհանջանեան.

Ես մի կարճ ժամանակով Բեռլինից եկել եմ Ժընև, և շուտով մեկնելու եմ նորից Բեռլին.– որովհետև Ձեր եղբոր որդին, Կարապետը, իմ մօտս է ապրում, ուստի պարտք եմ համարում մի քանի տեղեկություններ տալ նրա մասին:

Հոկտեմբերից Կարապետը Մարբուրգից տեղափոխվեց Բեռլին, որ այնտեղից էլ Ռուսաստան ուղևորվեց, սակայն գերման կառավարությունը թոյլատույթին չ'տվեց, իբրև զինուորական հասակի մեջ գտնուողի, և միջազգային օրենքի հիման վրայ նա ստիպված է մնալ Գերմանիայում մինչև պատերազմի վերջը. միայն այսքան.– ուրիշ ո'չ մի նեղություն, ո'չ մի ճնշում. ազատ է ուստիկանական հսկողությունից. ամբողջ Բեռլինում ուր ուզում է՝ կարող է գնալ, միայն Բերլինը թողնել իրաւունք չունի:

Տրամադրությունը վատ չէ, առողջ է չափազանց, լաւ պարապում է. նիթականի կողմից էլ շնորհիւ Ձեր հոգացողութեան մինչև օր[ա] չի նեղւել, թող որ Յիւրիխի մի պրոֆեսոր (կարծեմ Zeller) Տ. Մեսրոպ եպիսկոպոսի միջնորդութեամբ պատրաստակամութիւն է յայտնել դրամ հասցնելու:

Ես ամբողջ մի բնակարան ունեմ. և Կարապետը ուրիշ մի հայ տղայի հետ ապրում եմ ինձ մօտ, մի յարկի տակ, միասին եփում ենք, միասին ուտում:

Միայն Ձեզնից նամակ չ'ստանալը մեծ հոգս է պատճառում նրան, այնպէս որ խնդրում եմ բարի լինէք յաճախ գրելու Ձեր առողջութեան մասին և ընտանիքի նույնպէս:

Յարմար է գրել **Դանիայի՝ Կօպէնհագէնի «Կարմիր խաչ» վրայ Կարապետին ուղարկելու համար.** հասցէն հետևեալն է՝ **«Կօպէնհագէն. Կարմիր խաչ»** (ոռւներէն կամ ֆրանսերէն)

Berlin, Wilmersdorf.

Nassauis strasse 32ⁱⁱ

Karapet Melik-Ohandjanian

bei A. Issahakian.

Մնամ իսկական յարգանքներով և բարևներով

Ձերդ՝ Աւետիք Իսահակեանց:

ԵՐԿՐՈՐԴ ՆԱՄԱԿԸ (փոստային քարտ)

21 նոյեմբ. 1915

Ժընև

Մեծարգոյ Պարոն

Փ. Մելիք-Օհանջանեան

Սեպտեմբերին ողջ և առողջ թողի Կարապետին. այդ մասին գրեցի Ձեզ իր ժամանակին. հիմա նրանից նամակ եմ ստանում, որ գրում է, թէ Ձեզնից վաղուց է տեղեկութիւն չունի. խնդրում է, որ շուտ-շուտ գրէք, փող ստանում է պ. Զէլիկի միջոցով, Յիւրիխից. ապրուստը սաստիկ թանգացել է Բեռլինում. այդ ի հարկէ ի նկատի ունենալով Ձեր բարութիւնը պիտի չխնայէք Կարապետից, որը լացով է Ձեր անունը միշտ տալիս, թէ խեղճ

Բօրեղբայրս օր չտեսաւ մեր ձեռքից, այս վերջն էլ որ պակասը լրացըրեց: Հիմա նա համալսարանում դասեր է լսում. ժամանակը զուր չի վատնում. մի քանի հայ ընկերներ ունի՝ իրարով մխիթարում են. Աստուած ողորմած է. մի բան կլինի, ամեն տեղ սուգ ու լաց է, գոնէ նա միանգամայն ապահով կացութեան մէջ է. կ'աշխատեմ նրանից՝ հենց որ լուրեր իմացայ Ձեզ իմաց տամ:

ջերմ յարգանքներով

մնամ՝ Աւետիք Իսահակեան

փոստ քարտի վրայի կնիքը

28.11.15

Geneve

Russie-Erevan

(Caucase)

Е. Превосходитель.

Г.П.К. Мелик-Оганджян

Прокурору Эчмιάдз. синода

в г. Эривань

ԵՐՐՈՐԴ ՆԱՄԱԿԸ

8 նոյեմբ. 1917

Ժընև

Մեծարգոյ բարեկամ

Պ. Փ. Մելիք-Օհանջանեան.

Պատիւ ունեմ Ձեզ հետեւեալը գրելու. այսօր մեր սիրելի Մելիքից, Բերլինից, այս իմաստով գրած մամակ ստացայ Ձեզ հաղորդելու. «Սիրելի Բօրեղբայր, շա՛տ ուրախ եմ, թէ դուք, թէ ամբողջ ընտանիքը գիտում թէ քաղաքում ողջ և առողջ էք:

Յուսով եմ, որ դուք իմ մամակները վաղուց ստացած կը լինիք, որովհետև նրանք ես ուղարկել եմ կոնսուլ Սուտերի վստահելի հասցէով. և մանաւանդ որ շատ մամակներ ես գրել[եմ] նոյն հասցէով:

Ես շատ լաւ եմ, և հանգիստ շարունակում եմ պարապմունքներս. շուտով էլ տեղիս համալսարանում ուսանող կը գրեմ:

Այսօր ստացայ Ձեր 7.IX գրած մամակը. նոյնպէս ստացել եմ և Բագրատի մամակը. և իր ժամանակին պատասխանել կոնսուլի ապահով հասցէով: Կարօտալի համբոյրներով ու բարեկներով ամբողջ ընտանիքին մնամ միշտ ձեր Մելիք. »:

Մելիքը շարունակ ինձ գրում է. մինչև հիմա լաւ է. նեղութիւն չի քաշել. հիմա Գերմանիայում դրութիւնը օրէ օր [է] վատանում, թա՛նգ, թա՛նգ, թա՛նգ. ապրել անկարելի է դառնում և միայն Ձեր հայրական խնամքով է, որ նա պիտի կարողանայ այդ դժարութիւններից գլուխ հանել:

Այստեղ Զուիցերիայումն էլ դժոխք է դարձել, նզոված Գերմանիան աշխարհ քանդեց, և դէռ քանդում է. տեսնենք երբ է հերթը իրեն գալու. սպասենք և յուսանք:

Յարգանքներով և բարեկներով